Հավելված 1
Հաստատված է
«Այդի Բանկ» ՓԲԸ վարչության
2026 թվականի մարտի 13-ի N 99-Լ որոշմամբ
Գործում է սկսած 2026 թվականի մարտի 16-ից

«ԵՎՐՈ ԱՐԺՈՒՅԹՈՎ SWIFT ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ԱՐՇԱՎԻ» ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Ընդհանուր դրույթներ.

1. **Արշավ՝** «Այդի Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից **16.03.2026թ-ից 16.06.2026թ**-ը ներառյալ իրականացվող արշավ:
2. **Փոխանցում իրականացնող՝** Արշավի շրջանակներում **«Այդի Բանկ» ՓԲԸ-ի մասնաճյուղերում և Idram&IDBank** հավելվածի միջոցով՝ Եվրո արժույթով, SWIFT միջազգային փոխանցումներ իրականացնող ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձ՝ գործող և նոր հաճախորդ:
3. Արշավի ընթացքում **«Այդի Բանկ» ՓԲԸ-ի մասնաճյուղերում և Idram&IDBank** հավելվածի միջոցով՝ Եվրո արժույթով, SWIFT միջազգային փոխանցում իրականացնող անձն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները, որոնք համարվում են վերջնական և անվիճարկելի:

2. Արշավի պայմաններ.

1. **Արշավի** ընթացքում ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձանց կողմից **«Այդի Բանկ» ՓԲԸ-ի մասնաճյուղերում և Idram&IDBank** հավելվածի միջոցով՝ Եվրո արժույթով, SWIFT միջազգային փոխանցումների սակագինը սահմանվում է 5,000 ՀՀ դրամ՝ անկախ փոխանցման ուղղությունից և գումարի չափից:
2. Արշավը գործում է 16.03.2026թ-ից մինչև 16.06.2026թ-ը ներառյալ:
3. Արշավի պայմանները չեն տարածվում իրավաբանական անձանց, ինչպես նաև ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց կողմից իրականացվող փոխանցումների նկատմամբ:
4. Հաճախորդների կողմից Արշավին մասնակցության համար լրացուցիչ գործողության կատարում չի պահանջվում:
5. Արշավի գործողության ընթացքում կիրառելի չեն «Այդի Բանկ» ՓԲԸ-ի կայքէջում «Սակագներ» բաժնում հրապարակված Եվրո արժույթով ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձանց կողմից իրականացվող փոխանցումների սակագները: